



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԴՈՒՔ, ԱՂԱԲԱՐ

Լ Ի Ր Ի Կ Ա



ԵՐԵՎԱՆ

1930



ՌՈՒՔ. ԱՂԱԲԱԲ *by*

ref. of ...

Լ Ի Ր Ի Կ Ա

22/12/30



Գ Ի Յ Լ Ի Ս

1930

H 8014



Գլխավոր № 1027.

Տիրամե 1900.

ՊՈԼԻԳՐԱՖՏՐԵՍԻ 5-ՐԴ ՏՊԱՐԱՆ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂ. № 68

Պ Բ Ո Լ Ո Ք

Ծելի ենք հունտից մեծ բերքի,
Ծփում ենք հնչուն հողմերով —
Կոյեքիտ-կյանքը՝ մեր յերգին
Տվել և իր շունչն ու կորով:

Հեյ, դու հին սղոհտ՝ քնքշաբար
Ներբողներ հնչիր քնարով,
Կամ յեղիք դանդաղ յեղնառայլ
Ու դյութիլիք սլառնառ զնալով:

Սբընթաց ավտոն մեր յերգի
Թեում և թափով, նոր խոսքով,
Թռչում և, թռչում նա գեպի
Աշխարհի սիրտը բորբ — Մոսկով...

Ս Ե Ր

Յեղնում ե արեը, բույր տաճում,
 Բուրում ե արեը կենսալի,
 Յերկիրը իր գիրկն ե լայն բացում,
 Հպում ե շրթները՝ հուր շաղին...

Վազում են գետերը քջջում,
 Ցուրում են գետերը՝ փերուզե
 Թվում ե հեքյաթ են քչիչում,
 Իսկ յերկիրն ուզում ե հար լսել...

Լսում ե յերկիրը ժպտալեւ
 Ու ապա շուրթ խփում, հաժբուրում,
 Վառվում են հուր հասկեր ու վարդեր,
 Ժպտում են, փթթում ու բուրում:

Միրում եմ դարունը մեր յեկնող
 Բույր ծծում ծով կյանքի շուրթերից,
 Իմ սերը՝ կարապ չի մի մեռնող,
 Իմ սերը՝ ծիծաղկոտ կոմյերիտ...

1928 թ.

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՅԵՐԳ

Ձահկություն իմ՝ դու խինդ իմ քաղցր...

Ձրնդան սիրտ իմ, հնչիր դու անուշ,
Նորը հորդում ե, հաղթ ե ընթացքը,
Մշուշն ու մութը հալչում են անուշ:

Արևի ծորն ե նորերի սրտում,
Հուրհրան, վարդես համբույրն առաջին.
Սիրտ իմ գնդում ես դաշտերի գրկում,
Ծեղկին ցնծում ես՝ շշակի կանչին...

Կոմյերիտ քույր իմ, անուշ աղջիկ մի,
Քնքուշ ծաղիկ չես, կամ մի՞ ու մերած...
Լիմոն-արևը թող դեղին իջնի,
Ուրիշ արևներ ենք վառել հիմա:

Կոմյերիտ քույր իմ, լուսե աղջիկ դու,
Խնչ... կարտա եմ քեզ, մի՞թե դու չկաս.
Ահա նայում ես, հայացքդ հառու.
Գիտեմ, ինձ հետ ես, գիտեմ կգաս...

Գիտեմ, կանգնած ես հենց իմ շաքքում դու,
Լուսե գալիքն ե մեր սիրտը հյուսել,
Յերգ-կյանքը հիմի պոեմ ե գառնում,
Ամեն տողի մեջ՝ բյուր խինդ ու բյուր սեր:

ԼԻՐԻԿԱԼ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

Սիրտ, քնար դարձիր, հնչեղ ու կուռ,
Այս յերգին պետք է յերկաթ քնար.
Յերգ, զնգա, ինչպես մանգաղն արտում —
Յերբ արտն է հոսում վարար-վարար:

Տողեր իմ ուժեղ, վոնց վոր կապար,
Տողեր իմ միշտ ալ, կոկոն ու վարդ,
Վոնց շարքեր կարմիր գվարդիական,
Հրամանատարի կոչին պատրաստ...

Արշավեք այժմ խինդով խանդոտ,
Ծնծղա դարձիր սիրտ, ցնծա հիմի.
«Ավրորան» ահա խենթ մի տենդով
Ճեղքում է ջուրը մեղկ յերգերի...

«Ավրորա» նավ դո՛ւ, յերգ յերկաթե,
Դրոշդ փողփողա թո՛ղ հողմի թեխն,
Ու դրոշիդ վրա վոսկե բառեր —
Յեվ անմար անուն, անմահ՝ Լենին:

Սպասիր մեծ արեւի, մի լողա դձւ,
 Լծենք պիտի քեզ մատորներին.
 Մենք ըս դիակին այլ տեսք ենք տալու,
 Քանդակելու յենք հրե Լենին...

ՈՒԺԻ ՄԱՍԻՆ

Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես,
 Խենթ ե քո թափը, թափդ ծովոդ,
 Թափդ ծովում ե, ափն ե թովիչ.

Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Յերեկվա շատը՝ հսոր չնչին ե,
 Ենքան ճղճիմ ե անցյալը խորթ,
 Ու բեղմնալի յե թափը նորի.
 Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Ուժը մեր շատ ե, ուժը յերկաթ.
 Մեր գյուղերից ու քաղաքներից՝
 Նա հավաքել ե բերկրանք հնքան.
 Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Յերկաթի, հողի բանականներից
 Ուժը աճել ե ու կուտակվել,
 Այժմ դարձել ե անհաղթելի.
 Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Անտակ յեռանդ կա բազուկներում
 Ու մենք կանգնած ենք պատրաստ կռվի,
 Հակահարված տանք մեր թշնամուն.
 Յերկիր իմ, յերկիր, դու սլանում ես...

Յ Ե Ր Գ Ռ Ա Զ Մ Ի

Աշխարհի բոլոր ծայրերից
 Հորդանոս յեկեք ու վարար,
 Ընկեր իմ, անդին ընկեր իմ,
 Դուրս յեկ կարճաժալ:

Ո՛ր, լսեք խոսքը ճշերոսի՝
 Կրճքին խաչ, ձախ վոռքը փայտից,
 Այլ թեք կտրած հենց ուսից,
 Զախի տակ կաստիլ...

Անիծած ու սև հն ապրին
 Բռնաբեր լճւր եր, թե՛ յերազ
 Զարթեց բռն խանդը մարդկային —
 Ասին պատերազմ...

Մտոս յեղավ աշխարհն ափից-ափ
 Խենթացած, խնդաց նա ուրախ
 Հուր հաղաց՝ անդուլթ, անպիտան,
 — Հուռ ամ... ամ... ամ...

Սպանդանոց դարձավ աշխարհը,
 Կամ միլիոն մարդու գերեզման

Ու կանգնեց մի մեծ վաշխառու
Սնունը՝ մահ:

... Յեւ վարդեր անթիվ արնագույն
Մնացին անթուփ ու անթերթ
Արևը, վորպես պայթած ումթ,
Դաշտերը խանձեց...

*
* *

Հոկտեմբեր...
Այ մի շրապնել,
Հին կյանքը նետած փակուղի
Կենսաբեր շիթեր սրակեց
Քաղաքին, գյուղին...

Կոկոններ անթիվ ու պուր-պուր,
Ծաղկեցին շուրջը Լենինի,
Լենինյան խոսքը՝ ամենուր
Թովիչ և հիմի:

Վառողը դրել արևին
Սուր սրել ժանիք ու ատամ,
Կարծում են բանդել կարող են
Հեղեղն այս անտակ...

Կոմիտեներն հյուսված հույզերից,
Վիթխարի ուժի դու ուղիո.

Կոմիտեներն դու մեր ուժերի
 Կուռ ունեզույցատուր:

Աշխարհի բոլոր ծայրերից,
 Դրոշով խրոխտ, արնավառ,
 Ընկեր իմ, անդին ընկեր իմ,
 Դուրս յեկ կարնավալ...

Թող զողա աշխարհն ամփից-ամփ
 Պալատներն ընկնեն հիմնովին
 Լենինի խոսքը թող զնգա՝
 — Խաղաղություն
 Խրճիթներին:

1929 թ.

ՀԱՆԳԱՏԻ ՏՈՒՆԸ

Սվում ե հովը գով՝ գալարուն,
 Վոնց թրթիռ աղջկա սրտի,
 Արևի ցող՝ շողերն անաղմուկ
 Ննջում են սարերի գրկին:

Վազում են առվակներն, ուռճանում
 Կամ հանդարտ, թափանցիկ, լազուր,
 Կամ թունդ-թունդ թնդում են՝ հորձանում
 Թվում է, թե յերգ են ասում:

Եղ ուրախ համերգում՝ ծիծաղկոտ
 Ու մամռոտ լեռների կրճքին,
 Իր շուրջը սոսիներ լի ծաղկով
 Նստել ե «Տունը՝ հանգստի»:

Յեկել ե հին բանվոր Կարենը
 Բեզարած շախտեքից հանքի
 Ու հիմի նստել ե, նայում ե,
 Քնքշության նազանքը կյանքի:

Յերբ տեսնում, հարցնում եմ յես նրան.
 — Ի՞նչպես ես իմ ընկեր՝ Կարեն,
 Պաղում ե ժպիտն իր մարմանդ
 — Զահել եմ յես նորից, Զահել...

... Հիշում եմ դաշտերը հեռանկառ,
 Ռումբերի ծուխը մոտի, վոլոր,
 Շփում եր քամու հետ շինելու,
 Թնդում եր դաշտը չորս բոլոր...

Վերհիշում, պատմում ե հնապեա քաղցր,
 Ու հնքան ներդաշնակ հոգուն,
 Վոր կարծես վողջ կամքն իր կարծր
 Հաղթության յերզով ե հորդում:

... Իսկ վաղը մենք նորից սիթմի տակ
 Միլիոնի նոր տեմպով աճուն,
 Բարձրացող հիմքերին պիտի տանք
 Աղյուսներ՝ հզկված ու ամուր:

Ք Ա Ղ Ք Ե Ն Ի

Լուսնի մանգաղը՝ մեղմ սահելով,
Կամաց հնձում ե արտն աստղերի,
Իջնում ե՝ մովը քնքուշ թևով,
Զիջում իր տեղը՝ վառ լույսերին:

Ու այդ պահուն հենց՝ թանձր ու խաղաղ
Փոքրիկ սենյակին ենք քան վայել,
Խռպտա զլում ե—ջութակն իր թավ
Ժանգոտ, հաստափոր մի ինքնայեռ:

Յեվ բոլորում են շուրջը նրա,
Հեզ գլուխներ շատ՝ կարճ մտքերով
Պատին ննջում ե, փռչին վրան
Հիսուսը բռնթ՝ իր մութ աչքերով...

Հիսուսի մոտ եդ եծանագին,
Հեզնոդ ժպիտով ու դարմացած՝
Հազարամյա իր շրջապատից—
Լենինը ահա նայում ե ցած...

Անմահ Լենին դու, թեր ես ընկել,
Այստեղ մի որք տարի յե՝ ծիր,

Միտրինակ ու հիւանդ, անթէ,
Սպասում են որեւէ իրենց այցլին:

Ո՛ր, կյանք մեռնող գո՛ւ՝ չորս պատերի
Մարդիկ խելքով կարճ, բուժ մտքերով,
Այստեղ տոպրակն ե թանգ ավելի,
Քան պրքերը քո՛ւ կենին՝ բոլոր:

Դրսում լույսեր են՝ խորհրդային,
Կյանքը հորդում ե Ջադհաի պէս,
Պալիս ե նորը հզոր քայլով,
Հորանջիր սենյակ, որորիւր քեզ...

ՅԵՐԳ ԶԻՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ծերության ձյունը՝ քնքուշ ու սպիտակ՝
 Թեպետ արծաթ ե ցանում մազերին,
 Հին գվարդիան ելի ջահել ե, կուռ կամբ
 Ղեկում ե առաջ, անշեղ, անթերի...

Խոսքերը—որենք, մտքերը—թեղեր,
 Ենքան սիրելի, ենքան հարազատ.
 Հոսում են՝ Կրեմլից—Մոսկովից թել-թել—
 Հյուսում՝ Միության սրտերն անհամար:

Պիտներ վոնց վոր մտքերով իր նոր,
 Վոնց վոր ժպտում ե, նայում պատկերից.
 Անմահ դու լենին՝ կորով ու գորով,
 Այդ են ներշնչում աստղ աչքերդ...

Ծփում ե ծափով ալ՝ նրանց միջին
 Մեծ Կոմինտերնի դրոշը ծածան,
 Մտերիմ ենքան ու ենքան վճիտ
 Ահա գծվում ե ապագան քաղցր...

Հ Ո Ւ Ն Տ Ե Ր

Յերկիր իմ, մանուկ իմ,
Տոն ունիս մի վեա,
Դաշտերդ փթթել են
Կոմունիզմի պես,
Բերքը քո ծափում ե,
Ասում մի նոր յերդ՝
Քո հունտն ու ծաղկունքը
Անուշ—պիտներ...

Յերկիր իմ, բերքը քո
Ծով ե ալելիք,
Քաղցր եղ հունտը քո
Ծորն ե արեի,
Ամենքիս սրտերը
Խինդոս—զինով ե,
Խնդության կաթը մի
Խնդուն պիտներ...



h108
H

Դիտում ե վե կա Պեն,
 Ժպտում ե անգին,
 Վոնց դիտի բատրակը
 Կոլխոզի հանդին,
 Ժպտում ե վե կա Պեն,
 Շոյում, փուրգուրում,
 Ու հունտը պիտնեք
 Ցողում ե, քուրում:

1928 թ.

ՊԱՅՎԱՎՈՐ ՊԻՈՆՆԵՐ

Յերկիրն իմ, վոնց վոր մի պիոններ և,
Տառներկու դարունքի պիոններ,
Փողփողում են փողկապ-դրոշները,
Զարկում և խնդությամբ սիրալը՝ կրեմլ:

Կանգնել և նա խիզախ պատվի առած,
Ժպտում և, աչիկներն իր՝ Վոլխովստրոյ,
Վոնց կոլվար կանչում և՝ առաջ-առաջ,
Հաղթական բանակով զեպի գրոհ...

Արեն իմ բրոնզ և ֆիզիկուլտուրնիկ
Են մով-մով ծովումն և լողանում,
Ծփում են հասկերը և սեղն ու սինձ
Կոլխոզի, հանդերում հորձանուտ:

Ու մի որ վզին ծեր յերկրագնդի
Պիա կռալն միողկապ ալ՝ Որեց-Ռեյն,
Վոր ժպտա աշխարհը կարմիր խլինդից
Վորպես մեծ, պատվավոր-պիոններ:

Լ Ե Ն Ի Ն

Հիմքերը ինչքան կուռ են,
 Զուլվածքը պողպատից է,
 Հղկված է ու անրիժ է,
 Զգված է վեհ ու հաստատ,
 — Ո՞վ է եղ մեծ վարպետը
 Յեւ ժամն է նախագիծը.
 — Ահա նա միշտ կանգնած է
 Զեռքը՝ կուռ առաջ պարզած:

Պատերը բարձրանում են,
 Հիմքերի պես ամուր են.
 — Եղ ժիլ է բարձրացնում
 Յեւ ժիլ է ղեկավարը,
 — Ահա նա հաղթանդամ է,
 Գործերը ամենուր են...
 Բեառնի ամեն շենքի՝
 Սյունի հետ նա անմահ է:

Թռչում են անիվները,
 Շչում են թավալում են,

Հոսանքը տե՛ս, վազում և
 Լույս տալիս ու կյանք հախառն,
 — Եղ հիվ և պատում և
 Եղ հիվ և ծափաղում և,
 — Սիրտը իր, պատուաւի
 Վաղքի հետ և բաքախում:

Հանդերը կոխողների
 Ու արտերն ինչ հասուն են,
 Ծփում են ու հոսում են...
 Տես ծով և, թե ովկիան
 — Եղ հիվ և ախոսում և,
 Եղ հիվ և սերմանում և,
 — Ամեն մի հաաիկի հետ
 Ծլում և աճում ու կա:

Անցնում են զրնդում և,
 Թմբուկն ինչ թունդ թնդում և,
 — Տես ինչքան պիոներ են
 Գալիս են անցնում կարդ-կարդ
 — Եղ նրա սանիկներն են,
 Եղ նրա կուռ սերունդն և
 Պատգամի կրողները,
 Ու փայլուն մեր ապագան:

ԼԵՆԻՆԸ ԶԱԳԵՍՈՒՄ

Հսկահասակ
 Ու հաղթանդամ
 Կանգնած է նա,
 Բետոն է, կուռ
 Շլյուզների,
 Շինվածքների
 Ափի վրա,
 Վորպես հսկա
 Մի ուղեցույց
 Խենթ ջրերի
 Թափի վրա՝
 Իջեցրած է
 Ձեռքը նրա:
 Իսկ իրանը
 Հսկահասակ՝
 Մի ձգտումով
 Ելեքտրական
 Թեքել է նա
 Դեպի առաջ:
 Ու նայում է
 Հսկայական

Շփոթների
 Յերթի վրա,
 Ուր հյուսված է
 Յերկաթների,
 Խենթ ջրերի՝
 Յերգը-ուրախ...

Ու յերբ տնջնես
 Նրա մոտով—
 Հսկահասակ
 Եղ տխրանը՝
 Յույց կտա քեզ
 Գործող կամքի
 Մի մեծ հանդես՝
 Դեպի Ջազես:

ՎՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՐԳԸ

Յերբ արևը պայծառ շողեց՝
 Գարնանային ծիծղուն ցեկան,
 Մեր մեծ յերկրի ամեն կողմից
 Հավաքեց մեզ, հորդեց... յեկանք...

Վորդինիք ենք հողմերի,
 Գարնանային շողերի,
 Մենք ձգտում ենք՝
 Իրար հասնել,
 Իրար մրցել,
 Ու գալարուն
 Պտույտներով
 Վրլոր,
 Մրլոր,
 Իրար գրկել,
 Սառուցային
 Հանգույցներին
 Հալել, խռկել...

Հորդուն յեկանք, ծիծաղ-ծափով,
 Թարս - Թարս յեռանդ ու կյանք բերինք

Մեր դաշտերում, հանդում թափենք
Բերքը լինի առատ, բերքի

Մենք վաղում ենք,
Միանում ենք,
Իրար գրկում
Լայնանում ենք.
Մեծ գետերին՝ քնած խաղաղ,
Ստիպում ենք զաբթնել, խաղաղ,
Դուրս գալ ափից
Դժվել թափից
Անցնել հափից,
Յեղ վաղողի, վաղել, յերգել,
Թռչել, կարչել
Ու կարկաչել...

Կամսոմոլյան դարնան ցեղան,
Լավ ե ղեկում, լավ ե ղեկել,
Ու դեռ պիտի ղեկի յերկաթ՝
Վոք նոր, հաստ-հաստ՝
Սառույց ճեղքենք...

1927 թ.

Մ Ա Յ Ի Ս

Մայիս ենք մենք,
Գալիս ենք մենք.—

Շարքեր ունենք՝
Գարնանային հեղեղի պես հորդ,
Յերգեր ունենք՝
Գարնանային վորոտի պես խրոխտ,
Դրոշներ ունենք՝
Մայիսյան ալ արևի պես բորբ,
Կամքեր ունենք՝
Նոր-գարունքի ահեղկանչ ամպրոպ...

... Յեվ ինչպես վոր
Գարնանային ուժը հզոր.
Պայքարում ե,
Քայքայում ե
Ու վերջ տալիս
Զմեռվա հին՝ կապանքներին—
Մենք ել հնապես
Գարունքի պես
Հաղթ ու խրոխտ,
Յուռ, անհողդողդ,

Դուրս ենք յեկեղ ին կյանքի դեմ
 Պայքարելու ու վառելու
 Ամենուրեք
 Մայիսի մեկ...

Դալիս ենք մենք,
 Մայիս ենք մենք:

1925 թ.

ՅԵՐԳ ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ

Դարձիր, մաշին իմ,
 Դարձիր, դարձիր,
 Տրված չափը քո
 Թափով անցիր,
 Ի՞նչ են վռտերն այժմ,
 Ի՞նչ ե չափը,
 Չափը՝ անափ
 Հիմի մակընթաց ե...

Դարձիր, մաշին իմ,
 Յերգով դարձիր,
 Յերգ ե այժմ կյանքը
 Անհուն, անժիր...
 Ահա շշակները
 Համերգում են
 Այժմ կոչ ե հզոր—
 Նոր յերկրումն իմ...

Ու անիմները
 Թռչկոտում են,
 Անցնում ամեն սահման
 Հոսում, խոսում,
 Մի հզոր ուժ ե
 Նրանց շարժում.

Մրցման մի խանդ է
 Նրանց հուզում:

Խինդն է, խինդն անհուն,
 Մալարվում է,
 Հալչում, ծորում է մի
 Յերգի կարկաչ.
 Ինձ մրցման է կանչել
 Հոռու ընկերն իմ..
 Դարձիր, մաշին իմ,
 Դարձիր, դարձիր...

Պիտի հասնենք,
 Անցնենք այս սահմանն ել...
 Դալիք, ներկա դարձիր,
 Դալիք ավեր,
 Բաշդ թափ տուր, ցատկիւր
 Վանց նժույզ հուր,
 Դարձիր, մաշին իմ,
 Դարձիր, դարձիր...


Բ Ե Ր Գ Ի Յ Ե Ր Գ Ը

Յերգում ե հողը ու շնչում ե,
Թռչում ե հողմը, խենթ մի թռչուն,
Վռակե աշունն ե քնքուշ իջնում
Անհուն կյանքը՝ մեզ խինդ ներշնչում:

Այդ բերքի յերգն ե, խոր ու անուշ,
Վոնց վոր խաղողն ե այգում, կաթում,
Վոնց վոր տրակտորն ե հանդը վարում
Վոնց աղջիկներն են կալում պարում...


Արեը վոնց կոմյերիտունի,
Ծեգի շուրթերով համբուրվում ե,
Բերքի յերգը նոր, խնդությամբ լի,
Շաղի պես ահա, տևս փովում ե...

1926 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Յեր.
1. Պրոլոգ	3
2. Սեր	4
3. Լիրիքական յերգ	5
4. Լիրիկա Հոկտեմբերյան	6
5. Ուժի մասին	8
6. Յերգ սաղմի	9
7. Հանդստի տունը	12
8. Քաղքենի	14
9. Յերգ հին դվարդիայի և յերխա. մասին	16
10. Հունտեր	17
11. Պատվավոր սլիոններ	19
12. Լենին	20
13. Լենինը Ջադեսում	22
14. Վատկների համերգը	24
15. Մայիս	26
16. Յերգ մրցակցության	28
17. Բերքի յերգը	30



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- | | |
|------------------|----------------------|
| 1. «ՀՈԿՏԵՄԲԵՐ» | Հանգես № 1 |
| 2. «ՀՈԿՏԵՄԲԵՐ» | Հանգես № 2 |
| 3. Գ. ԳՐԻԳ. | Բանաստեղծություններ |
| 4. ՄԱՐՏԻՆ | Պատկերներ |
| 5. Վ. ՍԻՄՈՆՅԱՆ | Վերելք |
| 6. Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ | Նոր |
| 7. ՊԱՅԱԶԱՏ | Հաղաճ |
| 8. Բ. ԱՄԻՐ | Աշխարհը ռուս լեզուով |
| 9. Գ. ԽԱԼԱԹ | Կոլեկցիա |
| 10. Ռ. ԱՂԱԲԱԲ | Լիրիկա |
| 11. ՀՈ. ՊՈԴԱՍԵԱՆ | Բանաստեղծություններ |

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL 0044660

1- (104)

A $\frac{1}{8014}$

15 407.